

Աղասի Աշոտի Թավադյան

**Գնաճի կառավարման արդյունավետությունը
(ՀՀ նյութերով)**

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավոր՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Աշոտ Հակոբի Բայադյան

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ
Կարեն Համլետի Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. մայիսի 8-ին ժամը 14⁰⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՁ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. ապրիլի 5-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ա.Լ. Ասլանյան

ԱՏԵՆԱՌՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Գնաճի կառավարումը և նրա արդյունավետությունը հանդիսանում են ազգային տնտեսության դրամավարկային քաղաքականության կենտրոնական տարր: Գնաճի կառավարման արդյունավետության հիմնախնդիրը հատկապես արդիական է այժմ, երբ ընդհանուր տնտեսական արդյունավետության հիմնախնդիրից ելնելով առկա է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կայեքի հստակեցման և գնաճի ցածր տատանումներով և տնտեսության համար բարձր արդյունավետությամբ բնութագրվող ծրագրի հստակ նախանշման անհրաժեշտություն:

Գնաճի կառավարման արդյունավետության ու տնտեսական առաջընթացի պատճառահետևանքային կապերը բաց շուկայական տնտեսության զարգացման հարցերը պահանջում են ակտիվ և դինամիկ դրամավարկային քաղաքականություն: Համաշխարհային տնտեսագիտական գրականության, այդ թվում նաև հայ տնտեսագետների աշխատություններում լայնորեն դիտարկվել են տնտեսության պետական կարգավորման համակարգում դրամավարկային քաղաքականության ձևավորման և գնաճի կառավարման հիմնախնդիրները:

Չնայած ՀՀ դրամավարկային քաղաքականության տարիների ընթացքում գրանցված առաջընթացին գնաճի կառավարումը այսօր էլ կարևորագույն հիմնախնդիր է: Առկա է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի հիմնակետային կապի ցածր հետադարձության մակարդակ: Առկա են նաև գնաճի սեզոնային տատանումներ, դոլարիզացիայի բարձր մակարդակ, որոշակի «փողի սով», որը դոլարիզացիայի բարձր մակարդակի հետ համակցված դժվարացնում է գնաճի արդյունավետ կառավարումը: Գյուղատնտեսության և այլ ոչ մոնետար գործոնների ազդեցության բարձր մակարդակը գնաճի վրա, ներկրվող ապրանքների, հատկապես էներգակիրների ազդեցության բարձր աստիճանը գնաճի ցուցանիշի փոփոխության վրա դժվարացնում են դրամավարկային քաղաքականության և գնաճի կառավարման ուղենիշի ճշտագրտումը՝ երբեմն սառեցնելով կարևոր որոշումների ընդունումը:

Հայաստանի Հանրապետությունում գնաճի կառավարման արդիական հիմնախնդիրները հետևյալն են՝ գնաճի կառավարման նպատակային մակարդակների գործոնների փոխկապվածությունների հստակեցում, այդ կառավարման նպատակների արդյունավետության բարձրացում, մեկ տարվա և երկարաժամկետ կտրվածքով գնաճային տատանումների մեղմում: Կառավարման արդիական հիմնախնդիրներից են նաև գնաճի մակարդակի փոփոխության դինամիկայի ազդեցության գնահատումը ընդհանուր մակրոտնտեսական առաջընթացի, կայունության ապահովման ու հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համաչափ փոփոխության վրա:

Ներկայացված հիմնախնդիրները հիմնավորում են տվյալ թեմայի արդիականությունը և նրանց վերլուծությունը մեծ նշանակություն ունի գնաճի կառավարման արդյունավետության գնահատման համար:

կենտրոնական բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և գիտնականների մասնագիտական հրապարակումները, հաշվետվությունները ու էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները:

Ատենախոսության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ և այլ պետությունների պաշտոնական վիճակագրական տվյալները, փորձագիտական գնահատումները, հետազոտության արդյունքները, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կայքերը, կատարված հետազոտության համար օրենսդրական հիմք են հանդիսացել ՀՀ օրենքները և նորմատիվային ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքները ունեն տեսական, մեթոդական ու կիրառական ուղղվածություն: Դրանցից գիտական նորույթ են հետևյալները.

- Համակարգվել են գնաճի վրա ազդող գործոնները ըստ պահանջարկի և ծախսերի գնաճի, ինչպես նաև ըստ փոխանակման հավասարման փոփոխականների վրա ազդեցության:
- Բացահայտվել են գնաճի վրա ազդող գործոնների պատճառահետևանքային կապերը, դրանք դասակարգվել են ըստ կառավարման նպատակային մակարդակների և վերլուծվել փոխկապվածությունները:
- Գնաճի կառավարման արդյունավետության և տնտեսական աճի ապահովման տեսանկյունից գնահատվել է դրամի փոխարժեքը: Ներկայացվել են վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվի և միջակայքային փոխարժեքի եզրերը:
- Բացահայտվել են ՀՀ տնտեսության համար գնաճի նպատակադրման քաղաքականության իրականացման ռիսկերը և հնարավորությունները՝ բարձր ու ցածր վերաֆինանսավորման տոկոսադրույքի պայմաններում:
- Ձևակերպվել է գնաճի արդյունավետ կառավարման փուլային սկզբունքը՝ հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները այլ տնտեսական ցուցանիշների հետ: Այս փուլերի իրականացման արդյունքում կմեծանան գնաճի կայուն ու երկարաժամկետ կարգավորման հնարավորությունները:

Ատենախոսության փորձարկումը, կիրառական նշանակությունը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի նիստում: Աշխատանքի մոտեցումները ներկայացվել են «Բազմաչափ վիճակագրական վերլուծություն և էկոնոմետրիկա» VII միջազգային դպրոց սեմինար, Երևան - Դոնի Ռոստով միջազգային գիտաժողովներում և «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատության արդյունքները կարող են օգտագործվել գնաճի արդյունավետ կառավարման, ինչպես նաև գնաճի և այլ տնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները գնահատելու համար: Ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել դրամավարկային քաղաքականության բարելավմանն ուղղված ծրագրերում: Հետազոտությանում կիրառվող մոտեցում-

ները և կատարված վերլուծությունը կարող է օգտագործվել ուսումնական գործընթացում:

Ատենախոսություն հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 134 էջի վրա: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված զրականության ցանկից և 3 հավելվածից: Ատենախոսությունը պարունակում է 14 զծապատկեր և 5 աղյուսակ:

Գևաճի կառավարման նպատակները անհրաժեշտ է հետազոտել ոչ միայն մոնետար գործոնների փոխադարձ կապերի կառավարման արդյունավետության բարձրացման ժամանակ, այլև ապրանքների և ծառայությունների շուկայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողի շուկայում վերաֆինանսավորման տոկոսադրույքը ազդում է պահանջարկի գևաճի վրա, իսկ ապրանքների և ծառայությունների շուկայում ծախսերի գևաճի վրա:

Ատենախոսության երկրորդ **«Գևաճի վրա ազդող գործոնների գնահատումը և կառավարումը»** գլխում իրականացվել է գևաճի վրա ազդող գործոնների համակարգում և կառավարման հնարավորությունների վերլուծություն: Արդյունակի տեսքով պատկերվել են գևաճի վրա ազդող գործոնների կապերը, ներկայացվել են գևաճի վրա ազդող գործոնների կորելացիոն կախվածությունները: Գնահատվել է ՀՀ ԿԲ գևաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը, նաև գևաճի նպատակադրման քաղաքականության կառավարման միջանկյալ հատված հանդիսացող ընդհանուր փողի զանգվածը: Վերլուծվել է գևաճի և փոխարժեքի փոխկապվածությունները և կարգավորման հնարավորությունները:

Գևաճի արդյունավետ կառավարումը հնարավորություն է ստեղծում, գևաճի վերին սահմանը չանցնելով, նպաստել տնտեսական աճին, մրցունակության բարձրացմանը և սոցիալական խնդիրների լուծմանը: Վերին սահմանը չհասնելու պարագայում անհարժեշտ է ապահովել: ՀՆԱ-ի հնարավորինս բարձր աճ, առևտրային հաշվեկշռի էական բարելավում, իրական աշխատավարձի և թոշակների աճի բարձր տեմպ: Այդ նպատակներին հասնելու համար աշխատանքում գնահատվել է առանցքային գործոնների ազդեցությունը գևաճի վրա, ինչը արդյունավետ է գևաճի կառավարման ժամանակ:

Գնաճը հանդիսանում է ընդհանուր տնտեսական փոխկախվածությունների համակարգի մեջ կարևորագույն տարր: Գնաճի արդյունավետ կառավարման համար նպատակահարմար է տալ նրա վրա ազդող գործոնների փոխկապակցված վերլուծություն՝ գնահատելով այդ գործոնները: Գնաճի կառավարման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է համակարգված կառավարել նաև նրա վրա ազդող գործոնները: Գնաճի վրա ազդող գործոնները խմբավորված են ըստ դրամավարկային, հարկաբյուջետային գործոնների և փողի շրջանառության, գների ու առևտրի ծավալի վրա ազդող շուկայական գործոնների:

Հայաստանում փողայնացման մակարդակը 2008 թվականին եղել է 19.3 %, 2009-2012 թթ. ունեցել ենք այդ ցուցանիշի որոշակի աճ, սակայն այն դեռևս էապես գիջում է նույնիսկ ԱՊՀ երկրների ցուցանիշների մեծամասնությանը: Փողայնացման ցածր ցուցանիշը նաև չի նպաստում դոլարիզացիայի մակարդակի իջեցմանը: Փողայնացման ցածր մակարդակի պայմաններում բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ չէ որ զսպում է գևաճը: Փողի բարձր պահանջարկի և էապես ցածր առաջարկի պայմաններում կարող է առաջանալ հետևյալ պատճառահետևանքային կապը՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճ – ֆանկային վարկի տոկոսադրույքների ավելի բարձր աճ – ինքնարժեքի աճ – ծախսերի գևաճ:

Ինչպես ցույց է տալիս փոխարժեքի (FX) կարգավորման գործընթացը վերջին տասնամյակում այն ունի առանցքային դեր տնտեսության համար և ոչ ճիշտ հաշվարկված կամ կտրուկ կերպով իրականացված դրամի արժևորումը կհանգեցնի


առևտրային հաշվեկշռի, ապա ներքին շուկայի վատթարացմանը, որը երկարա-
 ժամկետ կտրվածքով միշտ վտանգավոր է ծախքերի գնաճով (զծապատկեր 2):
 Էներգակիրների, հատկապես վառելիսյութի գնի աճը (B) հանգեցնում է
 սպառողական գների աճի, քանզի վառելիսյութը մեծ ազդեցություն ունի
 շուկայական գների աճի վրա, որը կարող է հանգեցնել ծախքերի գնաճին: Պետական
 ծախսերը (G) ազդում են փոքր ինչ ուշացումով: Մակայն ազդեցությունը զսպում է
 գների աճը: Սա կարող է բացատրվել նրանով որ պետական ծախսերը իրենց
 բնույթով ազդում են պահանջարկի վրա, որը երկարաժամկետ կտրվածքով
 խթանում է տնտեսությունը, ինչպես նաև նրանով, որ պակասուրդի
 ֆինանսավորումը ոչ գնաճային է: ՀՀ-ում սպառողական գների ինդեքսի աճը (CPI)
 նախորդ ժամանակահատվածում հանգեցնում է դրանց աճին տվյալ
 ժամանակահատվածում (գնաճային սպասումներ): Տրանսֆերտները (T) ևս ունեն
 երկարաժամկետ ազդեցություն այսինքն առկա է ազդեցության լագ: Վերջիններիս
 միայն 5 եռամսյակ արագ եղած փոփոխությունն է ազդում տվյալ
 ժամանակահատվածի գների վրա: Ազդեցությունը գնաճի վրա բացասական է:
 Փաստացի վերջինս այնքան էլ չի հանգեցնում սպառողական շուկայի
 աշխուժացմանը: Հնարավոր է նաև տրանսֆերտային գումարների ստերիլիզացիան
 փոխարժեքի մակարդակը պահպանելու և երկրում գնաճը այդ ճանապարհով թույլ
 չտալու համար: Փողի զանգվածի (M) աճը նույնպես ուշացումով է ազդում: Մակայն
 վերջինիս ազդեցությունը լրիվ հիմնավորված է:

	B	C	CPI	FX	G	GDP _r	IMP	M	T	W
B	1.000	-0.156	0.569	0.018	0.164	0.051	0.078	-0.093	-0.048	-0.250
C	-0.156	1.000	-0.096	0.191	0.561	0.691	-0.517	0.623	0.397	0.175
CPI	0.569	-0.096	1.000	-0.364	-0.392	-0.078	-0.046	-0.195	0.312	-0.141
FX	0.018	0.191	-0.364	1.000	0.542	0.215	-0.192	-0.189	0.565	0.654
G	0.164	0.561	-0.392	0.542	1.000	0.597	-0.452	0.456	0.311	0.371
GDP _r	0.051	0.691	-0.078	0.215	0.597	1.000	-0.551	0.859	0.528	0.294
IMP	0.078	-0.517	-0.060	-0.192	-0.452	-0.551	1.000	-0.512	-0.443	-0.015
M	-0.093	0.623	-0.195	-0.189	0.456	0.859	-0.512	1.000	0.283	0.084
T	-0.048	0.397	0.312	0.565	0.311	0.528	-0.443	0.283	1.000	0.572
W	-0.250	0.175	-0.141	0.654	0.371	0.294	-0.015	0.084	0.572	1.000

Գծապատկեր 2. Գնաճի վրա ազդող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կորելացիոն կապը (2003-2012թթ.)

Մակրոտնտեսական ցուցանիշների կորելացիոն կապի վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառողական ծախսերը (C), իրական ՀՆԱ-ն (GDP_ր), ներմուծվող գների ինդեքսը (IMP) և անվանական աշխատավարձը (W) գնաճի վրա էական ազդեցություն չունեն:

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 3-ը գոյություն ունի որոշակի և արտահայտված կապ գնաճի և ՀՀ գյուղատնտեսական ոլորտի անհաջողությունների միջև:



Գծապատկեր 3. Գնաճի և գյուղատնտեսական իրական աճի փոխկապվածություն

Գծապատկերից երևում է, որ այն տարիներին որոնք զրանցել են գյուղատնտեսական շարունակական աճ գնաճը եղել է կայուն վիճակում: 2003թ. և 2010թ. վերջին 10 տարիներին առանձնացել են ամենաբարձր գնաճով՝ 8.6% և 9.4% համապատասխանաբար: Իրոք 2003թ. գնաճը պատճառաբանվում էր հացահատիկի գների բարձրացմամբ¹: 2010թ. գնաճը բացատրվում է տարբեր ճգնաժամային և հետզնաժամային արտաքին և ներքին հետևանքներով, սակայն ինչպես երևում է գծապատկերից տվյալ տարիներին եղել է երաշտային և՛ հացահատիկի, մշակաբույսերի, և՛ անասնապահության ոլորտում, որը մեծ հավանականությամբ ուռճացրել է գնաճը: 2010թ. որպես գնաճային գործոն Կենտրոնական բանկը բերում էր նաև անհաջողությունները գյուղատնտեսական ոլորտում, բերքատվության ցածր մակարդակը²: Գնաճը իսկապես որոշ չափով պայմանավորված է

¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Երրորդ գումարման արտահերթ նստաշրջան, 2004թ.
<http://www.parliament.am/transcript.php?AgendaID=1034&day=13&month=12&year=2004&lang=arm>
² URL: <http://www.panarmenian.net/arm/details/49624>.

ցյուղատնտեսական երաշտներից: Այս տարրը բավական չափով մեծացում է անտրոշությունը գնաճի կանխատեսման, գնաճի ցուցանիշի պլանավորման մեջ: Այսպիսով անհրաժեշտ է իջեցնել ցյուղատնտեսական երաշտների ազդեցությունը տնտեսության վրա, զարգացնել ցյուղատնտեսությունը, մեծացնել ֆինանսավորումը նաև փողի զանգվածի նպատակային աճով: Դա կբարձրացնի կայունության աստիճանը նաև այդ ոլորտում:

Դիտարկենք փոխարժեքի փոփոխության ազդեցությունը գնաճի նպատակադրման դրամավարկային քաղաքականության վրա: Փոխարժեքի ազդեցությունը գնաճի արդյունավետ կառավարման վրա եղել է մակրոտնտեսական քաղաքականության քննարկումների կենտրոնում հատկապես՝ անցումային տնտեսություններում: Առկա է փոխարժեքի ուղղակի կամ անուղղակի կերպով կիրառում գնաճային ճնշման զսպման համար: Այս պարագայում փոխարժեքը հանդիսատևում էր նաև որպես գնաճային ցնցումների կլանիչ: Որպես կանոն, գնաճի հետևողականորեն զսպման քաղաքականությամբ զարգացող տնտեսությունները ցուցաբերում են փոխարժեքի արժևորում, սա նաև սովորաբար ուղեկցվում է բարձր բանկային վարկի տոկոսադրույքներով:

Գնաճը իր տրամաբանությամբ մոտ է փոխարժեքի արժևորմանը: Գնաճը առնչվում է ներքին շուկայում ազգային արժույթի գնադրուսակության ուժի փոփոխության հետ: Բանկային վարկի տոկոսադրույքները, գնաճը և փոխարժեքը ունեն բարձր փոխկապակցվածություն: Կենտրոնական բանկը իր գործառնական նպատակի՝ տոկոսադրույքների միջոցով կարող է ազդեցություն ունենալ գնաճի, փոխարժեքի և նրանց փոխկապակցվածության վրա:

Կարևոր է նաև ուսումնասիրել թե ինչ ազդեցություն ունի գնաճի նպատակադրման քաղաքականությունը փոխարժեքային տատանումների և նրանց տնտեսական ազդեցության վրա: Գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետության տեսանկյունից այս հարցը կարելի է տրոհել երեք կարևորագույն կետի. փոխարժեքի փոփոխության ազդեցությունը գնադրուսակության պարիտետի վրա, փոխարժեքի փոփոխության անուղղակի ազդեցությունները առևտրային հաշվեկշռի և ներքին տնտեսական ակտիվության վրա, գնադրուսակության պարիտետի փոփոխության հետևանքները պետության համաշխարհային դիրքի վրա:

Հայաստանի Հանրապետությունում փոխարժեքի փոփոխության ազդեցության խնդիրը գնաճի, առևտրային հաշվեկշռի և ներքին տնտեսական ակտիվության վրա բավականին մեծ է: ՀՀ-ում ներմուծումը գերազանցում է արտահանումը զրեթե 3 անգամ և ՀՀ դրամի 2003-2008թթ. արժևորման տարիներին տվյալ հարաբերությունը մեծացավ 1.9ից (2003թ.) մինչև 4.7 (2009թ.): Փաստացի առաջին անհրաժեշտության ապրանքների մեծամասնությունը ներ է մուծվում Հայաստան, առկա է ներմուծվող գնաճ և նրա չափը ՀՀ-ում բավականին մեծ է, որը դժվար կառավարելի է: Այս դեպքում գնաճի կարգավորման դասական մեթոդները կարող են անարդյունավետ լինել:

Փոխարժեքի և գնողունակության պարիտետի հարաբերությունը 2012-ին կազմել է 1,80 (401.8/222.7)³: Այս ցուցանիշը 2003-2008թթ. ընկած ժամանակաշրջանում իջավ 3,36-ից (578,7/172,2) մինչև 1,57 (305,9/195,0): Թվում է, թե ՀՀ արտադրված ապրանքները ի սկզբանե կարող են մրցունակ լինել զարգացած երկրներում: Սակայն, անշուշտ, զարգացած երկրներ արտադրանք են արտահանում նաև այլ ԱՊՀ պետություններ և էապես ավելի շատ, քան Հայաստանը: Որպեսզի փոխարժեքի և գնողունակության պարիտետի հարաբերության ազդեցությունը ՀՀ-ում լինի մոտ ԱՊՀ այլ երկրներին փոխարժեքը աստիճանաբար նպատակահարմար է, որ հասնի 430-450 դրամ միջակայքին 1 դոլարի համար: Այդ պարագայում տվյալ ցուցանիշը կձգտի ԱՊՀ երկրների միջին ցուցանիշին: Դա ակնհայտ նպաստավոր է գնագոյացման համար՝ միջազգային շուկաներում երկրի մրցունակության տեսանկյունից:

Ատենախոսության երրորդ **«Գնաճի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները»** գլխում գնաճի արդյունավետ կառավարման տեսանկյունից սահմանվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվը և միջակայքային փոխարժեքը, վերլուծվել և համակարգվել են գնաճի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում: Ներկայացվել են գնաճի վրա մեծ ազդեցություն ունեցող ոչ դրամական գործոններ, որոնք հատկապես բնորոշ են ԱՊՀ երկրների համար: Հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները այլ տնտեսական ցուցանիշների հետ՝ ներկայացվել են գնաճի արդյունավետ կառավարման փուլերը, որոնց կիրառումը կբարելավի առևտրային հաշվեկշիռը, ինչպես նաև կնվազեցնի ներմուծման գների ազդեցությունը գնաճի վրա:

Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը երկար ժամանակահատվածում պահում է անփոփոխ (2011թ. սեպտեմբերից 8%): Այս որոշումը ԿԲ-ն պայմանավորում է ՀՀ ներքին շուկայի համեմատաբար կայուն վիճակով: Այս ցուցանիշի շեմը պետք է ունենա տնտեսության համար ռեզերվ ձգնաժամային պայմաններում գնաճը արագ զսպելու համար: Այս ռեզերվը, սակայն, օժտված է ըստ ժամանակի և շեմի սահմանով, որից հետո վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցությունը դառնում է բացասական: Կայուն տնտեսական և արտաքին գների համեմատաբար անփոփոխ իրավիճակում նպատակահարմար է վարել վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահուն իջեցման քաղաքականություն: Այս գործընթացը ոչ միայն կմեծացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի *օգտակար ռեզերվը*՝ ավելի կառավարելի դարձնելով պոտենցիալ ռիսկերը տնտեսական ոչ բարենպաստ պայմաններում, այլև կթուլացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի ներկա կապանքները տնտեսական աճի տեսանկյունից: Կյթթանակի բանկային գործունեությունը և շուկան, ինչպես նաև կբարելավվի փողայնացման մակարդակը, որը բավականին ցածր է ՀՀ-ում փողի համեմատաբար մեծ պահանջարկի և ՀՀ դրամի ցածր առաջարկի պայմաններում:


³ Տվյալ տարվա տարեկան միջին փոխարժեքի և 1 ԱՄՆ դոլարի դրամի համեմատ գնողունակության պարիտետի հարաբերությունը:
Տվյալներ՝ <http://www.minfin.am/main.php?lang=1&mode=macroind&iseng=1&isarm=1>,
<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2012/01/weodata/download.aspx>.

Ցածր փողայնացման, անկատար մոնետար և շուկայական գործոնների բացասական ազդեցությունը

Բարձր դոլարիզացիայի մակարդակ, ուղեկցված դրամի ցածր արագափոփում

Ապրանքային և արտադրական շուկաների թերզարգացվածություն

Բանկային ոլորտի ցածր դերը տնտեսության ֆինանսավորման գործում



Գծապատկեր 4. Բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպքում ցածր փողայնացման տնտեսության ռիսկերը և հնարավորությունները

Գնաճի վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցության արդյունավետության վրա բացասաբար ազդում են 3 գործոն՝ դոլարիզացիայի մակարդակը, ուղեկցված դրամի ցածր առաջարկով, ապրանքային և արտադրական շուկաների թերզարգացվածությունը, բանկային ոլորտի ցածր դերը տնտեսության ֆինանսավորման գործում: Ատենախոսությունում ներկայացվել են, նաև գծապատկերների տեսքով, վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ցածր փողայնացման ազդեցությունը գնաճի վրա: Մեղմագրում պատկերված է բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպքում ցածր փողայնացմամբ տնտեսության ռիսկերը և հնարավորությունները (տես՝ գծապատկեր 4):

Հայաստանի Հանրապետությունում գնաճի կառավարման արդյունավետության բարձրացման և իրական ՀՆԱ աճի նպատակներից ելնելով, անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել գնաճի նպատակադրման քաղաքականության կառավարման միջանկյալ նպատակին: Հայաստանում հստակ է դոլարիզացման խնդիրը, որը նաև պայմանավորված է դրամի ցածր առաջարկով և փողի բարձր պահանջարկով: Արտաթույթը կազմում է էական ծավալ փողի շուկայում, փողի զանգվածի մեջ դրամի և արտաթույթի չափաբաժինները գրեթե հավասար են: Դրամական զանգվածի նպատակային աճը կօգնի նաև այս խնդրի լուծմանը, որը մեծացնում է անորոշությունը մոնետար զանգվածի կառավարման մեջ: ՀՀ-ում փողայնացման մակարդակը բավականին ցածր է՝ էապես զիջելով ոչ միայն զարգացած, այլ նաև ԱՊՀ մի շարք երկրների փողայնացման մակարդակին: Այս պայմաններում տնտեսության նորմալ ընթացքը չի բավարարվում փաստացի փողի սովի պատճառով: Այս դեպքում շուկայում սկսվում է բարձրանալ օտարերկրյա արժույթների դերը:

Գնաճը կարգավորել փողի զանգվածի զսպմամբ արդարացի չէ և այն պետք է կառավարվի նաև հստակ, ոչ գնաճային փողի զանգվածի մեծացմամբ և բաշխմամբ: Այս դեպքում դրվածքը համակարգային է և դա ոչ միայն հետագայում զսպելու և ավելի կառավարելի է դարձնելու գնաճը, այլ նաև զարգացնելու է ամբողջ տնտեսությունը:

Հայաստանի Հանրապետության համար տվյալ նպատակային ուղղությունները երեքն են՝ ենթակառուցվածքներ, ռազմավարական ոլորտների անհրաժեշտ արդիականացում, գյուղատնտեսություն: Տնտեսության համար ռազմավարական են համարվում այն ոլորտները, որոնք ունեն արտահանման մեծացման բարձր պոտենցիալ և/կամ արտադրում են աճի միտմամբ վերջնական արտադրանք, որը մրցունակ կլիկի նաև արտասահմանյան շուկաներում: Ինչպես նշվեց գյուղատնտեսությունը երաշտի տարիներին ունի անկանխատեսելի, բացասական ազդեցություն գնաճի վրա: Վերջին տասնամյակում «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքով սահմանված գնաճի վերին սահմանի զերազանցում գրանցած տարիները հիմնականում պայմանավորված էին ոչ կանխատեսված գյուղատնտեսական երաշտներով: Անհրաժեշտ է և նպատակային մեծացնել պետական աջակցությունը այս ոլորտում:

Տնտեսության երկարատև զարգացման համար նպատակահարմար է ցածր գնաճ, սակայն դրան հասնելու համար, գնաճի արդյունավետ կառավարման տեսանկյունից, անհրաժեշտ են հաջորդական, համակարգված, փոխկապակցված քայլեր: ՀՀ տնտեսության զարգացման ներկա իրավիճակում անհրաժեշտ է գնաճի

կառավարման փուլային սկզբունք՝ հաշվի առնելով գնաճի փոխկապակցություններն այլ տնտեսական ցուցանիշների հետ: Գնաճի արդյունավետ կառավարումը նպատակահարմար է ներկայացնել հետևյալ փուլերով.

1. Համեմատաբար կայուն տնտեսական պայմաններում և գնաճի որոշակի սահմանի չգերազանցման պարագայում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շեմի իջեցում, որը կմեծացնի վերջինիս տնտեսական օգտակարության ռեզերվը և կօժանդակի տնտեսավարող սուբյեկտներին:

2. Չգերազանցելով յուրաքանչյուր տարվա համար «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված գնաճի վերին սահմանը՝ նպաստել տնտեսության մրցունակության բարձրացմանը և առևտրային հաշվեկշռի էական լավացմանը, այդ թվում՝ դրամի սահուն արժեզրկման միջոցով՝ հաշվի առնելով փոխարժեքի փոխկապակցվածությունն արտահանման և ներմուծման հետ: Անհրաժեշտ է սահմանել այնպիսի փոխարժեքի միջակայք, որի կատարման հավանականությունը լինի հնարավորինս բարձր:

Իհարկե, սահուն իրականացված արժեզրկումը կբերի որոշակի կառավարելի գնաճի, ինչպես վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը կհանգեցնի պահանջարկի մեծացմանը՝ առաջացնելով պահանջարկի գնաճ և հակառակ կողմից զսպելով ծախսերի գնաճը: Այնուամենայնիվ, այս քայլերի դեպքում գնաճը կառավարելի է, և դա կնպաստի ներքին տնտեսական ռեսուրսների աճին:

3. Պահպանելով հնարավորինս ցածր գնաճ՝ մեծացնել փողայնացման մակարդակը ի հաշիվ դոլարիզացման մակարդակի կրճատման, ինչին նաև նպաստում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը: Այս քայլը դոլարիզացմանը հակազդող հիմնական միջոցն է, քանզի փողայնացման ցածր մակարդակի պայմաններում տնտեսությունում իր փողի պահանջը լրացնում է փոխարկելի արտարժույթի միջոցով: Որպես թիրախ այստեղ կարող է ընտրվել Արևելյան Եվրոպայի երկրների փողայնացման միջին մակարդակը:

4. Առևտրային հաշվեկշռի և փողայնացման մակարդակի էական բարելավման գործընթացի պարագայում, պահպանելով կայուն փոխարժեք, հասնել հնարավորինս կայուն ցածր գնաճի՝ առանց էական կառուցվածքային և սեզոնային տատանումների:

Այս փուլերի իրականացման արդյունքում կմեծանա գնաճի կառավարման արդյունավետությունը: Կաճեն գների կայուն և երկարաժամկետ կարգավորման հնարավորությունները:

Եզրակացություններ բաժնում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել որոշ եզրակացություններ ու առաջարկություններ, որոնցից հիմնականները հետևյալներն են.

❖ Համակարգվել է գների մակարդակի վրա ազդող գործոնների համախումբը: Այդ գործոնները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ այլ տնտեսական գործոնների հետ: Փողի քանակը կարող է մեծանալ և գների մակարդակը համապատասխանաբար աճել, ի հաշիվ էմիսիայի և փողի ներկրման: Գների մակարդակի վրա կարող է անտղղակի կերպով ազդել կապիտալի մեծացումը, աշխատանքի բաժանումը, ենթակառուցվածքների բարելավումը, որոնք շուկայական գործոններ են: Ավանդների ընդհանուր ծավալի և արագության վրա

ազդեցություն ունեն բանկային համակարգի զարգացումը և շրջանառության մեծացումը: Գների մակարդակի վրա ազդում է նաև փողի կուտակման չափի փոփոխությունը, որը անուղղակի ազդեցություն ունի գնաճի վրա փողի շրջանառության արագության միջոցով:

❖ Ներկայացված փոխանակման հավասարման դինամիկ տեսքը հնարավորություն է տալիս վերլուծելու դրամական զանգվածի ու դրա շրջանառության արագության փոփոխությունների որ չափն է հանգեցնում գնաճին և արտադրության տվյալ մակարդակում որքանով են դրանց փոփոխությունները թույլատրելի: Դրամական զանգվածի ոչ գնաճային հավելաճի տեմպերը պետք է ճշգրտել՝ հաշվի առնելով դրա շրջանառության արագության փոփոխությունները: Ցույց է տրվել, որ գնաճի քեյնսյան մոտեցման և դասական փողի քանակական տեսության մեջ առկա են որոշակի փոխադարձ կապեր: Փոխանակման հավասարման գործոն հանդիսացող դրամական զանգվածի և փողի շրջանառության արագության փոփոխությունը ազդեցություն է ունենում պահանջարկի գնաճի վրա, իսկ գների մակարդակի և շուկայի ծավալի փոփոխությունը առաջնահերթ ազդում է ծախսերի գնաճի վրա:

❖ Վերլուծվել են գնաճի նպատակադրման ռազմավարության կառավարման նպատակային մակարդակները (գործառնական, միջանկյալ, հիմնական), որոնց ֆունկցիոնալ կապերը ներկայացվել են գծապատկերի միջոցով: ԿԲ քաղաքականության համար կառավարման գործառնական մակարդակ է հանդիսանում վերաֆինանսավորման տոկոսադրույքը ու արժույթային պահուստների առաջարկը, որոնք անմիջական ազդեցություն ունեն միջանկյալ կառավարման նպատակի՝ դրամական ազդեգատների և ընդհանուր փողի զանգվածի վրա: Գնաճի նպատակադրման քաղաքականության հիմնական կառավարման նպատակը՝ գնաճի կայունության ապահովումն է, որն իր հերթին գտնվում է կառավարման միջանկյալ մակարդակի ազդեցության ներքո: Գնաճի նպատակադրման քաղաքականության կառավարման նպատակային մակարդակների կապերը ներկայացվել են ինչպես փողի շուկայում, այնպես էլ ապրանքների և ծառայությունների շուկայում:

❖ Ցույց է տրվել իրական ՀՆԱ-ի նպատակադրման քաղաքականության արդիականությունը: Ի տարբերություն գնաճի նպատակադրմանը այն առաջարկի ցնցումների և առևտրային ցնցումների ժամանակ չի նպաստում տեղական արժույթի արժևորմանը: Իրական ՀՆԱ նպատակադրումը ուղղված է պահանջարկի կայունացմանը և առաջարկի ցնցումների ժամանակ այդ ցնցումները հավասարաչափ կլանվում են և՛ գնաճի, և՛ ՀՆԱ-ի միջև: Դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը անհամեմատաբար ավելի բարձր է, երբ այն կենտրոնանում է իր տնտեսության արտադրական հզորությունների և ծախսերի փոփոխության վրա, այլ ոչ միայն սպառողական ծախսերի աճի վրա: Տնտեսական կառավարման արդյունավետությունից ելնելով պետությունը պետք է առաջին հերթին ձգտի իր քաղաքականությամբ երաշխավորել արտադրական սեկտորի կայուն և երկարաժամկետ աճ՝ ապահովելով համապատասխան նվազագույն գնաճ:

❖ Գնահատվել և արդյունակի տեսքով պատկերվել են գնաճի վրա ազդող գործոնների պատճառահետևանքային կապերը: Այդ գործոնները խմբավորվել են ըստ դրամավարկային, հարկաբյուջետային գործոնների և փողի շրջանառության,

գների ու առևտրի ծավալի վրա ազդող շուկայական գործոնների և դասակարգվել ըստ դրանց ազդեցության կառավարման նպատակային մակարդակների: Վերլուծվել են հետազոտությանը ենթարկած գնաճի վրա ազդող գործոնների կախվածությունները:

❖ Հետազոտվել է ՀՀ-ում 2006թ.-ից իրականացվող գնաճի նպատակադրման քաղաքականությունը, տվյալ ռազմավարությանը անցման դրդապատճառները, այդ ռազմավարության անցում կատարելու ազդեցությունը ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման վրա: Հետազոտության է ենթարկվել նաև գնաճի նպատակադրման քաղաքականության կառավարման միջանկյալ հատված հանդիսացող փողի գանգվածի և դրա տարրերի կառավարումը և մոդելավորումը ՀՀ-ում: Փողի գանգվածը միջանկյալ կապող օղակ է վերաֆինանսավորման տոկոսադրույքի ու գնաճի միջև և փողի ընդհանուր գանգվածի բաղադրիչների որակական հատկանիշների ցածր լինելու կամ փողի գանգվածի կառուցվածքային թերությունների դեպքում գնաճի կառավարումը կարող է լինել ոչ արդյունավետ:

❖ Ներկայացվել է գնաճի և փոխարժեքի փոխկապակցված կարգավորման նպատակահարմարությունը: Ընդհանուր տնտեսական կառավարման արդյունավետությունից ելնելով գնահատվել է փոխարժեքի փոփոխության ազդեցությունը առևտրային հաշվեկշռի և ներքին տնտեսական ակտիվության վրա, ինչպես նաև դրա փոփոխության ազդեցությունը պետության համաշխարհային շուկայական դիրքի վրա: Ցույց է տրվել, որ փոխարժեքը կարող է հանդիսանալ բացասական գնաճային և տնտեսական ցնցումների կլանիչ:

❖ Կայուն տնտեսական և արտաքին գների համեմատաբար անփոփոխ իրավիճակում նպատակահարմար է վարել վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահուն իջեցման քաղաքականություն: Այս գործընթացը ոչ միայն կմեծացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի օգտակար ռեզերվը՝ ավելի կառավարելի դարձնելով պոտենցիալ ռիսկերը տնտեսական ոչ բարենպաստ պայմաններում, այլև կթուլացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքի ներկա կապանքները տնտեսական աճի տեսանկյունից: Կիսթանվի բանկային գործունեությունը և շուկան, ինչպես նաև կբարելավվի փողայնացման մակարդակը, որը բավականին ցածր է ՀՀ-ում փողի համեմատաբար մեծ պահանջարկի և ՀՀ դրամի ցածր առաջարկի պայմաններում:

❖ Աշխատանքում ցույց է տրվել, որ միջակայքային փոխարժեքի հստակ սահմանումը գնաճի կառավարման տեսանկյունից ինչպես նաև ներմուծման գների դերը նվազեցնելու տեսանկյունից, կբարելավի առևտրային հաշվեկշիռը՝ խթանելով արտահանումը և կընդլայնի Կենտրոնական բանկի հնարավորությունները գնաճի կառավարման գործում: Առաջարկվել է միջակայքային փոխարժեքը սահմանել՝ հաշվի առնելով փողի շուկայում մեծ կշիռ կազմող արտարժույթը՝ համապատասխան իրենց կշռային հարաբերության: Տվյալ միջակայքը նպատակահարմար է սահմանել հնարավորինս փոքր, սակայն այնպես, որպեսզի կատարման հավանականությունը լինի բարձր, ոչ նվազող:

❖ ՀՀ-ում գոյություն ունեն գնաճի մի քանի զուտ ԱՊՀ երկրների համար բնութագրող պատճառներ, որոնք չունեն դրամավարկային բնութագիր և կառավարելի չեն դրամավարկային գործիքներով: Մասնավորապես տնտեսության

մենաշնորհային իրավիճակը, շուկայական մասնակիցների ոչ արդյունավետ վարքագիծը և գյուղատնտեսությունը: Աշխատանքում վերլուծվել է գնաճի և ՀՀ գյուղատնտեսական ոլորտի միջև կապը: Այն տարիներին որոնք գրանցել են գյուղատնտեսական շարունակական աճ գնաճը եղել է կայուն վիճակում: 2003թ. և 2010թ. վերջին 10 տարիներին առանձնացել են ամենաբարձր գնաճով՝ 8.6% և 9.4% համապատասխանաբար:

❖ Ֆինանսական կայունության և կանխատեսումների որակի բարձրացման նախադրյալներից էլնելով անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել ոչ միայն գնաճի նպատակային միջակայքը, այլև տնտեսության հիմնական ցուցանիշների, մասնավորապես՝ իրական ՀՆԱ-ի, առևտրային հաշվեկշռի, զբաղվածության, փոխարժեքի արդյունավետ փոփոխության միջակայքը:

❖ Տնտեսության երկարատև զարգացման համար նպատակահարմար է ցածր գնաճ, սակայն դրան հասնելու համար, գնաճի արդյունավետ կառավարման տեսանկյունից, անհրաժեշտ են հաջողրակական, փոխկապակցված, համակարգված քայլեր՝ հաշվի առնելով գնաճի փոխկապակցությունները այլ տնտեսական ցուցանիշների հետ: Գնաճի արդյունավետ կառավարումը նպատակահարմար է ներկայացնել հետևյալ փուլերով.

- կայուն տնտեսական պայմաններում և գնաճի որոշակի սահմանի չզերազանցման պարագայում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի շեմի իջեցում,
- չզերազանցելով յուրաքանչյուր տարվա համար «ՀՀ պետական բյուջեի» մասին ՀՀ օրենքով սահմանված գնաճի վերին սահմանը՝ նպաստել առևտրային հաշվեկշռի էական լավացմանը,
- պահպանելով հնարավորինս ցածր գնաճ՝ մեծացնել փողայնացման մակարդակը նաև ի հաշիվ դոլարիզացման մակարդակի կրճատման,
- առևտրային հաշվեկշռի և փողայնացման մակարդակի էական բարելավման գործընթացի պարագայում հասնել ցածր գնաճի՝ առանց էական կառուցվածքային և սեզոնային տատանումների:

❖ Աշխատանքում ցույց է տրվել, որ դրպես դրամավարկային քաղաքականության կառավարման գործիք, գնաճի վերաֆինանսավորման տոկոսադրույքի ազդեցության արդյունավետության վրա բացասաբար ազդում են 3 գործոն՝ դոլարիզացիայի մակարդակը, ուղեկցված դրամի ցածր առաջարկով, ապրանքային և արտադրական շուկաների թերզարգացվածությունը, բանկային ոլորտի ոչ բավարար դերը տնտեսության ֆինանսավորման գործում: Այդ գործոնների ազդեցության ռիսկերը և հնարավորությունները ՀՀ գնաճի նպատակահարմար քաղաքականության կառավարման նպատակային մակարդակների և ապրանքների ու ծառայությունների շուկայի վրա ներկայացվել են գծապատկերների միջոցով: Ցույց են տրվել վերաֆինանսավորման տոկոսադրույքի, փողի զանգվածի և գնաճի փոփոխության միտումները ՀՀ-ում:

❖ Հիմնավորվել է, որ դրամի զանգվածի աճը մեծ ազդեցություն չի ունենա գնաճի վրա, եթե հնարավոր է զուգահեռաբար փոքրացնել դոլարիզացիայի մակարդակը և կարգավորել կանխիկ փողի շրջանառությունը՝ ինչքան հնարավոր է կառավարելի դարձնելով այն: Փողայնացման բարձրացման գործում զգալի դեր կարող է ունենալ նաև ՀՀ արժեթղթերի շուկայի ծավալի մեծացումը:

Ատենախառության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Թավադյան Ա.Ա., Սղաճի ֆունկցիոնալ կապերը, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա #1 (78) հունվար 2007թ., էջ 108-110
2. Թավադյան Ա.Ա., Գնաճի վրա ազդող գործոնների համակարգումը, «21-րդ ԴԱԸ» N2, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, 2011, էջ 94-103, http://www.noravank.am/upload/pdf/4.Aghasi%20Tavadyan_02_2011.pdf
3. Թավադյան Ա.Ա., Գնաճի ու փոխարժեքի փոխկապակցված կարգավորումը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան - Դոնի Ռոստով, Տստեսագետ, հունիս 2011, էջ 613-616
4. Թավադյան Ա.Ա., Գնաճի վրա ազդող գործոնների գնահատման արդյունավետությունը, Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա #6 (144) հունիս 2012, էջ 37-39, 78
5. Թավադյան Ա.Ա., Գնաճի արդյունավետ կառավարման փուլերը, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Հանրապետական գիտաժողովի նյութեր զիրք 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, Երևան, 2012, էջ 50-55
6. Tavadyan A.A., Functional Links Affecting Inflation During Its Regulation, VIII-ая Международная школа семинар «Многомерный статистический анализ и эконометрика», Цахкадзор, Москва 2012, стр. 195-197

Эффективность управления инфляцией (по материалам РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 «Экономика, управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 8-го мая 2013г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике действующего в Армянском государственном экономическом университете по адресу 0025, РА, Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Актуальные задачи эффективного управления инфляцией следующие – анализ причинно-следственных связей уровней управления инфляцией, уточнение взаимосвязей инфляции, повышение эффективности уровней управления инфляцией, снижение инфляционных колебаний в краткосрочной и долгосрочной перспективе. Важнейшими задачами управления являются также анализ эффективности структурных элементов инфляции и оценка влияния инфляции на основные макроэкономические показатели.

Цель диссертации – выявление рисков и возможностей в управлении таргетирования инфляцией денежно-кредитной политики, оценка эффективности таргетирования инфляции и формулирование возможных путей повышения эффективности ее управления, выявление и анализ причинно-следственных связей инфляции, учитывая особенности экономики РА. Для выполнения этих целей были поставлены и решены следующие задачи:

- исследование теорий инфляции и представление их общих черт и различий,
- выявление взаимосвязей инфляции с другими экономическими показателями и представление системы инфляционных факторов,
- анализ эффективности политики таргетирования инфляции ЦБ,
- формулирование дерева целей управления инфляцией, исходя из эффективности политики таргетирования инфляции,
- исследование влияния курса национальной валюты на эффективность управления инфляцией,
- оценка причинно-следственной связи ставки рефинансирования и инфляции,
- формирование этапов эффективного управления инфляцией, с учетом взаимосвязей инфляции,
- анализ путей повышения эффективности управления инфляцией.

Научная новизна результатов исследования состоит в следующем:

- ❖ Исходя из инфляции спроса и издержек, а также учитывая воздействие на показатели уравнения обмена систематизированы факторы влияющие на инфляцию;
- ❖ Выявлены причинно-следственные связи факторов воздействующих на инфляцию. Факторы упорядочены исходя из целевых уровней управления и исследованы их взаимосвязи;
- ❖ Оценен курс национальной валюты исходя из эффективности управления инфляцией и обеспечения экономического роста. В работе представлены полезный резерв ставки рефинансирования и интервальный курс национальной валюты;
- ❖ Выявлены риски и возможности политики таргетирования инфляции для экономики РА в условиях разных значений ставки рефинансирования;
- ❖ С учетом выявленных взаимосвязей инфляции с другими экономическими показателями сформулирован этапный принцип эффективного управления инфляцией. В результате реализации данного принципа возрастут возможности стабильного и долгосрочного регулирования инфляцией.

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – “Economics, Management of Economy and its Branches”

The defense of the thesis will take place on May 8, 2013, at 14th o'clock at 014 Council of Economics at Armenian State University of Economics: 128 Nalbandyan Street, Yerevan, Armenia, 0025.

ABSTRACT

The actual tasks of efficiency of managing inflation are the following: analysis of cause and effect links of management levels of inflation, clarification of the inflation interrelations with other macroeconomic indicators, improvement of efficiency of the management levels of inflation, and reduction of inflation fluctuations in the short and long term. The most important tasks of the management are also analysis of the effectiveness of structural elements of inflation, as well as evaluation of the impact of inflation on the basic macroeconomic indicators.

The aims of the thesis are: identification of risks and opportunities on the management of inflation targeting, evaluation of the inflation targeting effectiveness and formulation of possible ways to improve the efficiency of its management, identification and analysis of cause and effect links of inflation, given the characteristics of Armenian economy. To meet these goals the following problems were set and solved:

- analysis of inflation theories and presentation of their similarities and differences,
- identification of the interrelations of inflation with other economic indicators and presentation of the system of inflationary factors,
- analysis of the effectiveness of the inflation targeting policy of the Central Bank,
- formulation of the management task tree of inflation, based on the effectiveness of the inflation targeting policy,
- research of the effect of national currency on the efficiency of managing inflation,
- assessment of cause and effect links of the refinancing rate and inflation,
- formation of stages of effective management of inflation, given the relationship between inflation and other economic indicators,
- analysis of the ways to improve the inflation management.

Scientific novelty of the research results are as follows:

- ❖ Based on the demand-pull and cost-push inflation, and given the impact on the indexes of equation of exchange, the factors affecting inflation are systematized;
- ❖ Cause and effect interrelations of factors affecting inflation are revealed. Factors are arranged based on the target levels of management and their interactions are analyzed;
- ❖ Based on the efficiency of inflation management and economic growth the effect of the exchange rate of national currency is estimated on the competitiveness of Armenia in the world market. The terms of the useful reserve asset of refinancing rate and the interval currency rate are presented in the work;
- ❖ The opportunities and risks of inflation targeting policy in different values of refinancing rate are revealed for the economy of Armenia;
- ❖ Given the identified interrelations of inflation with other economic indicators, the phase principle of effective management of inflation is formulated. The implementation of this principle will increase the possibility of long-term sustainability of inflation regulation;

A handwritten signature in black ink, appearing to be 'V. A. ...', written in a cursive style with a large, sweeping underline.